

սարակ յամենայն եկեղեցիս բազմութեանն<sup>1</sup>: 9 Չարացեալ ի սուրբ Յոզովն յորդորմամբ եւ եկեալ առ սուրբ կաթողիկոսն Յայոց Սահակ՝ զեկուցանէր նմա զիւրոյ բազմաժամանակեայ մտածութեան զխնդիրն<sup>2</sup>, եւ ընկալեալ ի նմանէ քաջալերութեան աւետիս, թէ «Չարացեալ պի՛նդ կաց, առեալ ընդ քեզ եւ այլ արս աւզնականս ի քահանայից՝ զոր ես պատուիրեմ. եւ ուր տկարանայք ի կարգել զհեգենայսն՝ բերեալ առ իս ուղղեմ զայն. քանզի յոյժ դիւրին է գիւտ իրացոյ զոր հայցես: 10 Բայց նախ արժան է մեզ զգացուցանել թագաւորին զպետս այսպիսի մեծ եւ կարեւոր խնդրոյ. վասն որոյ եւ քան զաւուրս ինչ յառաջ ոչ բազումս, առեալ քանք յեկեղեցւոյ յաղագս կարաւորութեան այդպիսի պիտոյից՝ ասացեալ է ուրումն<sup>3</sup> ցարքայ, թէ տեսի նշանագիրս հայերէն առ ումեմն եպիսկոպոսի<sup>4</sup> ի գեաւղ միում. եւ թագաւորն յիշեր զասացեալսն<sup>5</sup>, քանզի եւ ինձ նա պատմեաց»:

11 Եւ մտեալ սրբոյ կաթողիկոսին<sup>6</sup> Յայոց Սահակայ հանդերձ երանելեան<sup>7</sup> Մաշտոցիւ առ թագաւորն Վռամշապուհ եւ իմացուցեալ<sup>8</sup> նմա զպետս իրացն՝ յիշեաց եւ ինքն թագաւորն զխաւսեցեալսն վանականին վասն նորին իրացն ընդ նմա, զոր եւ նորա պատմեալ ուրախացոյց: 12 Եւ նոցա լուեալ զայս ի թագաւորէն՝ փութացուցանէին<sup>9</sup> զնա ասելով, թէ «Ճեպեա՛ յաղագս մեծ եւ աւգտաբեր աշխարհիս Յայոց գիւտիս<sup>10</sup> այսորիկ՝ ի ժամանակս քո, որ շատ աւելի առ յապայսն բերէ քեզ շահ, յիշատակ անմոռաց եւ աւգուտ երկնաւոր վայելից, քան զիշխանութիւն թագաւորութեանդ քո, եւ կամ որպէս յառաջ քան զքեզ նախնիքն քո էին յազգէն Արշակունեաց»: 13 Եւ թագաւորին լուեալ զայս եւ ինդալից եղեալ՝ ետ փառս Աստուծոյ, որ ի ժամանակս թագաւորութեան նորա զայսպիսի հոգեւոր կենաց փափաք ժառանգեաց յաշխարհիս Յայոց:

14 Վաղվաղակի ստիպով առաքեալ դեսպան զՎահրիճ ոմն անուն կոչեցեալ ի ծնողաց իւրոց հանդերձ հրովարտակաւ առ այր մի երեց<sup>11</sup> Յաբէլ անուն, որոյ ասացեալ էր յառաջագոյն ցարքայ, որ եւ մերձաւոր էր առն բարե-

1 2. առ հասարակ բազմութեանն

2 2. զխնդիրն

3 2. որումն

4 2. *Նախ*՝ եպիսկոպոսի, *ապա՝ ուղղած այսպէս, յետոյ էլ յաճախ նախ*՝ եպիսկոպոս, *ուղղած՝* եպիսկոպոս

5 2. զասացողսն

6 2. կաթողիկոսին. *ուրիշ տեղերում՝* կաթողիկոս, կաթողիկոս, կաթուղիկոս: *ՏՏ.* կաթուղիկոսին. *ուրիշ տեղերում յաճախ՝* կաթուղիկոս, *սակաւ՝* կաթողիկոս

7 2. երանելովն

8 *Ատ.* իմացեալ

9 2. փութանակի ցուցանէին

10 *ԲԳտ.* գիւտից

11 2*Ատ.* երեց